ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 103/10

Քաղ. Երեւան **05 մարտի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. մարտի 5-ի նիստում (արձանագրություն N77/9) քննարկեց «Հայատ Քիմյա Սանայի Ա.Շ.» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա. Գալոյանի 2010թ. փետրվարի 03-ի «Բելովո» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող «MULPE» (գրանցման համար՝ 14872) բառային ապրանքային նշանի գրանցման գործողությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ բողոք:

Բողոքում ներկայացված է, որ Վկայագիր N 6891 «MOLPED» ապրանքային նշանի սեփականատեր՝ Հայատ Քիմյա Սանայի Ա.Շ. (Hayat Kimya Sanayi A.S.) ընկերությանը հայտնի է դարձել, որ Հայաստանի Հանրապետության տարածքում 25.12.2009 թ-ին գրանցվել է «MULPE» (Վկ. N14872) ապրանքային նշանը:

Հայտատուն գտնում է, որ վերոնշյալ ապրանքային նշանը գրանցվել է իր՝ «Հայատ Քիմյա Սանայի Ա.Շ.» ընկերության իրավունքների խախտմամբ, ինչպես նաև «Mulpe» (Վկ. N14872) ապրանքային նշանը շփոթության աստիճան նման է (Վկայագիր N 6891) «MOLPED» ապրանքային նշանին և կարող է մոլորության մեջ գցել սպառողներին, քանի որ «Հայատ Քիմյա Սանայի Ա.Շ.» ընկերության արտադրանքը քաջ հայտնի է սպառողին ողջ աշխարհում, այդ թվում նաև՝ Հայաստանում:

«Հայատ Քիմյա Սանայի Ա.Շ.» ընկերության կարծիքով, վերոնշյալ ապրանքային նշանը չի համապատասխանում գրանցման պահանջներին:

Բողոքը ներկայացրեց կոլեգիայի անդամ պրն.Ա. Բաբայանը, նա նշեց, որ հիմք ընդունելով «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման

տեղանունների մասին» ՀՀ Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի "ա" ենթակետը եւ «Ապրանքային եւ սպասարկման նշանների հայտերի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման» կարգի 97-րդ կետը «Հայատ Քիմյա Սանայի Ա.Շ.» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա. Գալոյանի կողմից ներկայացվել է բողոք «MULPE» (գրանցման համար՝ 14872) բառային ապրանքային նշանի գրանցման գործողությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Պրն.Ա. Բաբայանը նշեց, որ կոլեգիան ուսումնասիրության արդյունքում հանգել է այն եզրակացության, որ գրանցված «MULPE» ոճավորված բառային ապրանքային նշանը ավելի հիշեցնում է «MOLPE»-ի քան «MULPE»-ի, այդ պարագայում, արտասանության ժամանակ բառերը ձայնային առումով նման են:

«Բելովո» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից հնչեցվեց, որ անհիմն է բողոքարկողի խնդրանքը, քանի որ իրենց կողմից գրանցվել է ոչ թե «MOLPE» այլ «MULPE» ապրանքային նշանը եւ որ «MULPE» ապրանքային նշանի անվավեր ճանաչման հիմքում դրված է բողոքարկողի «MOLPED» ապրանքային նշանի վերջին տառի առկայությունը եւ վիճարկվող «MULPE» ապրանքային նշանի ոճավորված լինելը, որը իրենից ներկայացնում է լատինական այբուբենի ոճավորված տառերով կազմված բառ, որը իր հերթին տալիս է յուրահատուկ պատկերային ընկալում:

Քննարկման արդյունքում բողոքարկման խորհուրդը պարզեց, որ բողոքում նշված ապրանքային նշանում ոճավորված U-տառը ավելի նման է O տառի քան, U-ի, հետեւապես «MULPE» գրանցված ապրանքային նշանը ընկալվում է որպես «MOLPE»:

Հիմք ընդունելով «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի "ա" ենթակետը եւ «Ապրանքային եւ սպասարկման նշանների հայտերի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման» կարգի 97-րդ կետը եւ ղեկավարվելով «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Հայատ Քիմյա Սանայի Ա.Շ.» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա. Գալոյանի 2010թ. փետրվարի 03-ի բողոքը եւ «MULPE» (գրանցման համար՝ 14872) բառային ապրանքային նշանի գրանցման գործողությունն անվավեր ճանաչել։

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումն ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան։

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան